

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 03

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ

31.10.2013թ. գիտական խորհրդի նիստի

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Թ. Խաչատրյան

Գիտական խորհրդի 56 անդամներից ներկա էին 38-ը:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Ֆիզմաթ ֆակուլտետի դեկանի 2012-2013 ուստարվա հաշվետվություն:

Զեկ.՝ ֆիզմաթ ֆակուլտետի դեկան Մ. Մարգարյան

2. Բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի դեկանի 2012-2013 ուստարվա հաշվետվություն:

Զեկ.՝ բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի դեկան Ա. Գրիգորյան

Ռեկտոր Վ. Ֆ. Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 38 անդամներ. կողմ՝ 38, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1. **ԼՍԵՑԻՆ.**- Ֆիզմաթ ֆակուլտետի դեկանի 2012-2013 ուստարվա հաշվետվությունը (**Զեկ.**՝ ֆիզմաթ ֆակուլտետի դեկան Մ. Մարգարյան):

Մ. Մարգարյանը հակիրճ խոսեց ֆիզմաթ ֆակուլտետի ելակետային կառուցվածքային մասերի՝ ամբիոնների մասին, որոնք վերամիավորման արդյունքում 4-ն են՝ բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոն, ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոն,

ինֆորմատիկայի ու նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն և տնտեսագիտության ամբիոն: Նշված ամբիոններն իրականացնում են ֆակուլտետի ուսումնական գործընթացը: Ֆիզմաթ ֆակուլտետում իրականացվում են բակալվրի առկա 5, բակալվրի հեռակա 5, մագիստրոսի 4 մասնագիտական կրթական ծրագրեր: 2012-2013 ուստարում ֆիզմաթ ֆակուլտետում բակալվրի առկա ու հեռակա և մագիստրոսի կրթական ծրագրով սովորում են 552 ուսանողներ, որոնցից առկա համակարգում սովորում են 159 ուսանողներ, հեռակա համակարգում՝ 329, մագիստրատուրայում՝ 61 և 3 հայցորդ/ասպիրանտներ: Դեկանն անդրադարձավ նաև ֆակուլտետի առկա ու հեռակա ուսուցման համակարգերում ուսանողների բաշխվածությանը՝ ըստ տարբեր մասնագիտությունների, ապա ներկայացրեց ուսանողների առաջադիմության ընդհանուր մակարդակը: Նա իր զեկույցում կարևորեց ֆակուլտետի դասախոսական կազմի բարձր որակավորումը: Նշեց, որ ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը նպաստում է նաև ֆակուլտետի հարուստ և ժամանակակից նյութատեխնիկական բազան:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը, ռեկտոր Վ. Գրիգորյանը:

Ա. Ֆարմանյանը նկատեց, որ Մ. Մարգարյանը հիմնականում խոսեց ֆակուլտետի դրական կողմերի, առավելությունների մասին, մինչդեռ հավասարապես կարևոր է ներկայացնել նրա թերությունները, բացասական կողմերը: Օրինակ, միայն այն փաստը, որ ֆիզմաթ ֆակուլտետի ինֆորմատիկայի ու նրա դասավանդման մեթոդիկայի և տնտեսագիտության ամբիոններում գիտական աստիճան ունեցողների թիվը դեռ փոքր է, արդեն իսկ մտահոգիչ է: Բացի այդ, հետաքրքրվեց՝ իրականացված է արդյոք հետազոտություն՝ պարզելու համար այն օբյեկտիվ պատճառները, թե ինչու «Կառավարում» ու «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» արդիական մասնագիտությունների գծով դիմորդների շրջանում չի նկատվել մեծ հետաքրքրվածություն: Ա.

Ֆարմանյանի հաջորդ հարցը վերաբերում էր ֆակուլտետի ռազմավարությանը:

Մ. Մարգարյանը նշեց, թե համամիտ է այն հարցում, որ 2 ամբիոններում գիտական աստիճան, կոչում ունեցող աշխատակիցների թիվը դեռ փոքր է, սակայն, ըստ նրա՝ խնդրի լուծմանը նախևառաջ պետք է հետևողական վերաբերմունք ցուցաբերեն համապատասխան ամբիոնների վարիչները: Ինչ վերաբերում է դիմորդների թվին, ապա մասնավորապես խոսեց «Կառավարում» մասնագիտության մասին, որտեղ հեռակա ուսուցման համակարգում նրանք 24-ն են, իսկ դա, նրա գնահատմամբ, վատ ցուցանիշ չէ:

Ինչ վերաբերվում է ֆակուլտետի ռազմավարությանը, ապա այն առայժմ մշակման փուլում է:

Վ. Գրիգորյանի համոզմամբ՝ ամբիոնները պետք է ակտիվ գործունեություն ծավալեն առաջիկա 5 տարիներին իրենց անելիքները հստակեցնելու և պլանավորելու ուղղությամբ: Առանձին ստորաբաժանումների կողմից առաջարկված գաղափարների հիման վրա պետք է ստեղծվի բուհի ռազմավարությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Ֆիզմաթ ֆակուլտետի դեկանի 2012-2013 ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար, և որոշման նախագիծն արված առաջարկություններով հանդերձ ընդունել հիմք:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 38 անդամներ. կողմ՝ 38, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2.ԼՍԵՑԻՆ.-

Բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի դեկանի 2012-2013 ուստարվա հաշվետվությունը (**Ձեկ.**՝ բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի դեկան Ա. Գրիգորյան):

Ա. Գրիգորյանի ներկայացմամբ՝ հաշվետու շրջանում կրթական գործընթացը կազմակերպվել է ծրագրային բարեփոխումների, ուսումնական գործընթացի պլանավորման, կազմակերպման եվրոպական չափորոշիչներին համահունչ և որակի ներքին ապահովման համակարգի ստեղծման, բոլոր կրթական ծրագրերում ու ուսուցման ձևերում կրեդիտային համակարգի իրականացման,

դասավանդման և ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի բարելավման ուղղություններով: Նա խոսեց ֆակուլտետի կառուցվածքի մասին, որի ելակետային օղակները կազմում են 3 ամբիոնները՝ աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն, դեղագործական քիմիայի, քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն և կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոն: Բնագիտաաշխարհագրական ֆակուլտետում առկա/հեռակա բակալավրի կրթական և մագիստրոսական ծրագրերով սովորում է 477 ուսանող, իսկ հետազոտական ծրագրով սովորողների թիվն 8-ն է: Նա խոսեց ֆակուլտետի մասնագիտությունների, դրանցից յուրաքանչյուրում սովորողների քանակի մասին: Հատկապես բարձր գնահատվեց բնագիտաաշխարհագրական ֆակուլտետում դասավանդող-մասնագետների պատրաստվածությունը, քանզի բոլոր ամբիոններն ակտիվ համագործակցում են ԵՊՀ-ի, Երևանի Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի, ԳԱԱ-ի Կենսաքիմիայի ինստիտուտի, ԳԱԱ-ի Կենդանաբանության ինստիտուտի, ԳԱԱ-ի Բուսաբանության ինստիտուտի, ՇՄ փորձագիտական կենտրոնի, ՇՄ Սելեկցիոն կայանի հետազոտական լաբորատորիաների հետ, Աբովյանի «ԱՐՓԻՄԵԴ», Երևանի «ԱԼՖԱ ՖԱՐՄ» դեղագործարանների, ՀՀ ԿԳՆ ԿԱԻ-ի հետ:

Որպես առավելություն դիտվեց նաև բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի ամբիոնների դասախոսական համակազմի երիտասարդ լինելու իրողությունը: Ընդ որում, համեմատաբար առավել երիտասարդ է դեղագործական քիմիայի, քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը, որտեղ դասախոսների միջին տարիքը 42 է:

Ինչ վերաբերում է խնդիրներին, ապա հատկապես կարևորվեց քիմիայի ու կենսաբանության լաբորատորիաների համար սարքավորումների թարմացումն ու արդիականացումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ս. Սողոյանը, Գ. Խաչիկյանը:

Ս. Սողոյանը նշեց, որ, հաշվի առնելով ուսանողների փոքրաթիվ քանակը՝ իր հարցը համարում է տեղին: Ըստ նրա՝ նախորդ տարիներին բավական մեծաթիվ են եղել քոլեջներից դիմողները և հետաքրքրվեց նրանց առաջադիմությամբ:

Այդ հարցին տիկին Գրիգորյանը պատասխանեց, որ բժշկական քոլեջից դիմած ուսանողների թիվը 5-ն է: Նրանցից 1-ը ցուցաբերում է լավ առաջադիմություն, իսկ մնացյալը՝ համեմատաբար ավելի ցածր, և նման վիճակը գլխավորապես պայմանավորված է նրանով, որ ուսանողներն ուսումը համատեղում են աշխատանքի հետ:

Գ. Խաչիկյանին մտահոգում էր «Սերվիս» մասնագիտության ուսումնական պլանից «Արտասահմանյան գրականություն» առարկայի ժամերի հեռացումը:

Ա. Գրիգորյանը պատասխանեց, որ իրենք չէին կարող սահմանափակել մասնագիտական առարկաների ժամերը և ստիպված են եղել կատարել նման ընտրություն:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի դեկանի 2012-2013 ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար, և որոշման նախագիծն արված առաջարկություններով հանդերձ ընդունել հիմք:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 38 անդամներ. կողմ՝ 38, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նախագահ՝

Վ. Գրիգորյան

Քարտուղար՝

Թ. Խաչատրյան